ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1053-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂ. ՏՈՒՆ 23 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՄՈ ՍՈՒՐԵՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի N 510-Ն՝ «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 27-ի N 50-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Վահան գյուղի 1-ին փող.տուն 23 հասցեում գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար հատկացված 0.1239 հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կամո Կիրակոսյանին, Ռոզա Խաչատրյանին, Սուրեն Կիրակոսյանին, Նարինե Կիրակոսյանին և Կարեն Կիրակոսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ., 26.12.2002թ. թիվ 510-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ 64 հոդվածի 1-ին կետի պահանջներին:

2. Կարո Սուրենի Կիրակոսյանին՝ ծնված 01.01.1956թ., Ռոզա Վաղոյի Խաչատրյանին՝ ծնված 20.07.1959թ., Սուրեն Կամոյին Կիրակոսյանին՝ ծնված 01.01.1985թ., Նարինե Կամոյի Կիրակոսյանին՝ ծնված17.01.1986թ. և Կարեն Կամոյին Կիրակոսյանին՝ ծնված 07.02.1990թ., համատեղ սեփականության իրավունքով հատկացվել է 0.1239 հա տնամերձ հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է 0.12382 հա: Հողամասի վրա 1970 թվականին կառուցված 75.1 քմ ընդհանուր ներքին մակերեսով նկուղային հարկը, 80.6 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 18.3 քմ մակերեսով բաց պատշգամբը, 27.7 քմ ներքին մակերեսով խորդանոցը, 25.8 քմ ներքին մակերեսով 1980թ.-ին կառուցված անասնաշենքը, 15.1 քմ մակերեսով ծածկը, 31.3 քմ ներքին մակերեսով 1980թ.-ին կառուցված ավտոտնակի շենքը, որոնք կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Կամո Կիրակոսյանի, Ռոզա Խաչատրյանի, Սուրեն Կիրակոսյանի, Նարինե Կիրակոսյանի և Կարեն Կիրակոսյանի համատեղ սեփական գույք:
3. Համայնքի կողմից Կամո Կիրակոսյանին, Ռոզա Խաչատրյանին, Սուրեն Կիրակոսյանին, Նարինե Կիրակոսյանին և Կարեն Կիրակոսյանին հանատեղ սեփականության իրավունքով հատկացված 0.12382 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք. Ճամբարակ